

**ԹԵՍ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԻՍԱՑՈՒԹՅԱՆ**  
**ԱՏՈՒԳՄԱՆ**

Հարց 1. Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է՝

- 1) կուսակցություններին
- 2) ժողովրդին
- 3) անհատ ձեռնարկատերերին

Հարց 2. Ինչպիսի՞ պետություն է Հայաստանի Հանրապետությունը՝

- 1) ժողովրդավարական
- 2) ավտորիտար
- 3) տոտալիտար

Հարց 3. Հայաստանի Հանրապետությունում ո՞րն է համարվում օրենսդիր մարմին՝

- 1) դատարանները
- 2) ՀՀ Ազգային ժողովը
- 3) կուսակցությունները

Հարց 4. Հայաստանի Հանրապետության պետական լեզուն՝

- 1) արևմտահայերենն է
- 2) գրական հայերենն է
- 3) ռուսերենն է

Հարց 5. Հայաստանի Հանրապետության դրոշը եռագույն է՝

- 1) կարմիր, կապույտ, սպիտակ գույներով
- 2) կարմիր, կանաչ, սպիտակ գույներով
- 3) կարմիր, կապույտ, նարնջագույն գույներով

Հարց 6. Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը՝

- 1) Գյումրին է
- 2) Երևանն է
- 3) Էրեբունին է

Հարց 7. Ո՞վ է նշանակում նախարարին՝

- 1) կուսակցությունները
- 2) ՀՀ Նախագահը
- 3) ՀՀ արդարադատության նախարարը

Հարց 8. Բոլորը հավասար են՝

- 1) միմյանց առջև
- 2) օրենքի առջև
- 3) ՀՀ Ազգային ժողովի առջև

Հարց 9. Մարդը պարտավոր չէ ցուցնունք տալ՝

- 1) հանցանք կատարած անձի դեմ
- 2) իր ընկերների դեմ
- 3) իր անուանու և մերձավոր ազգականների դեմ

Հարց 10. Նշվածներից ո՞վ կարող է ընտրվել Հայաստանի Հանրապետության Նախագահ՝

- 1) երեսունհինգ տարին լրացած, վերջին տասը տարում ՀՀ քաղաքացի հադիսացող, վերջին տասը տարում հանրապետությունում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք.
- 2) յուրաքանչյուր քաղաքացի
- 3) ՀՀ վարչապետը և ՀՀ Ազգային ժողովի պատգամավորները

Հարց 11. Նշվածներից ո՞վ կարող է ընտրվել պատգամավոր՝

- 1) յուրաքանչյուր քաղաքացի
- 2) քսանհինգ տարին լրացած, վերջին հինգ տարում ՀՀ քաղաքացի հադիսացող, վերջին հինգ տարում հանրապետությունում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք.
- 3) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող յուրաքանչյուր ոք

Հարց 12. Քանի՞ տարի ժամկետով է ընտրվում պատգամավորը՝

- 1) 5 հինգ տարի ժամկետով
- 2) ցմահ
- 3) 8 տարի ժամկետով

Հարց 13. Նշվածներից որո՞նք են համարվում ՀՀ վարչատարածքային միավորներ՝

- 1) շրջանները և գավառները
- 2) շրջանները
- 3) մարզերը և համայնքները

Հարց 14. Ո՞վ է իրականացնում Հայաստանի Հանրապետությունում ներքին քաղաքականությունը՝

- 1) ՀՀ կառավարությունը
- 2) ժողովուրդը
- 3) դատարանը

Հարց 15. Ո՞վ է ընդունում պատերազմ հայտարարելու և խաղաղություն հաստատելու մասին որոշումը՝

- 1) Ազգային ժողովը
- 2) ՀՀ վարչապետը
- 3) ՀՀ Ազգային ժողովը՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի առաջարկությամբ

Հարց 16. Նշվածներից ո՞վ ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք՝

- 1) յուրաքանչյուր քաղաքացի
- 2) յուրաքանչյուր ոք
- 3) ոչ ոք

Հարց 17. Նշվածներից ո՞վ ունի նամակագրության գաղտնիության իրավունք՝

- 1) յուրաքանչյուր քաղաքացի
- 2) յուրաքանչյուր ոք
- 3) ոչ ոք

Հարց 18. Ո՞վ ունի կրթություն ստանալու իրավունք՝

- 1) յուրաքանչյուր ոք
- 2) միայն ՀՀ քաղաքացիները
- 3) միայն լավ սովորողները

Հարց 19. Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք ունեն՝

- 1) յուրաքանչյուր ոք
- 2) սփյուռքահայերը
- 3) օտարերկրյա քաղաքացիները

Հարց 20. Նշվածներից ո՞վ ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք՝

- 1) յուրաքանչյուր քաղաքացի
- 2) յուրաքանչյուր ոք
- 3) ոչ ոք

Հարց 21. Ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու իրավունք ունեն՝

- 1) յուրաքանչյուր քաղաքացի
- 2) օտարերկրացիները
- 3) տասնութ տարին լրացած ՀՀ քաղաքացիները

Հարց 22. Նշվածներից ո՞վ իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը՝

- 1) յուրաքանչյուր քաղաքացի
- 2) յուրաքանչյուր ոք
- 3) ոչ ոք

Հարց 23. Նշվածներից ո՞վ ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք՝

- 1) յուրաքանչյուր քաղաքացի
- 2) յուրաքանչյուր ոք
- 3) ոչ ոք

Հարց 24. Նշվածներից ո՞վ ունի խոսքի ազատության իրավունք՝

- 1) յուրաքանչյուր քաղաքացի
- 2) յուրաքանչյուր ոք
- 3) ոչ ոք

Հարց 25. Մտավոր սեփականությունը պաշտպանվում է՝

- 1) ազգային անվտանգության մարմինների կողմից
- 2) օրենքով
- 3) կուսակցությունների կողմից

Հարց 26. Նշվածներից ո՞վ է պարտավոր օրենքով սահմանված կարգով մասնակցել ՀՀ պաշտպանությանը՝

- 1) յուրաքանչյուր քաղաքացի
- 2) օտարերկրացիները
- 3) պաշտոնատար անձինք

Հարց 27. Հայաստանի Հանրապետության կառավարությունը կազմված է՝

- 1) ՀՀ վարչապետից և նախարարներից
- 2) նախարարներից
- 3) ՀՀ վարչապետից և մարզպետներից

Հարց 28. Ի՞նչ կարգով են Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը ձեռք բերում ազգությամբ հայերը՝

- 1) պարզեցված
- 2) բարդ
- 3) առանց որևէ կարգի

Հարց 29. Ո՞վ է հրավիրում և վարում Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերը՝

- 1) ՀՀ Ազգային ժողովի նախագահը
- 2) ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը
- 3) ՀՀ վարչապետը

Հարց 30. Հայաստանի Հանրապետության սահմանադրությունն ընդունվում է կամ դրանում փոփոխություններ են կատարվում՝

- 1) ՀՀ կառավարության կողմից
- 2) ՀՀ սահմանադրական դատարանի կողմից
- 3) հանրաքվեի միջոցով

ԴԻՄՈՂ \_\_\_\_\_  
(ստորագրությունը)

\_\_\_\_\_   
(անունը, ազգանունը)